

Սեդա Բ. Գասպարյան
 Բանաս. գիյր. դոկտոր
 Գոհար Ռ. Հարությունյան
 Բանաս. գիյր. քեկնածու

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄԻ «ԱՄՈԹԱԼԻ ԱՐԱՐՔ...» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվագործաբանական քննություն*

Արդեն շուրջ մեկ դար Թուրքիան շարունակում է հսկայական քաղաքական ուժ և կապիտալ ներդնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը խոչընդոտելու համար: Սակայն որքան էլ հզոր լինի թուրքական ժխտողականությունը, որը միջազգային ասպարեզում իրավամբ բնութագրվում է որպես “Turkish denial syndrome” կամ “an industry of denial”¹, ակնհայտ է, որ հայ ժողովրդի պատմության՝ երիտթուրքերի արյունոտ ձեռքերով գրված այս ամենասև էջը, որն իր նախադեպը չունեցող բարբարոսություն էր, ի վերջո, կդատապարտվի որպես առաջին ցեղասպանությունը մարդկության պատմության մեջ²:

Պատահական չէ, որ 1918 թ. Հ. Մորգենթաուն գրում էր. «Ես վստահ եմ, որ մարդկության ողջ պատմության մեջ չկան այնպիսի զարհուրելի փաստեր, ինչպիսին այս կոտորածն է: Այն մեծ ջարդերն ու հալածանքները, որոնք տեղի են ունեցել անցյալում, գրեթե աննշան են թվում հայ ազգի՝ 1915 թ. կրած տառապանքների համեմատ»³: Թեև հայ ժողովրդի անասելի ողբերգությունը հետազայում դիվանագիտական խաղերի առարկա դարձավ եվրոպական մեծ տերությունների համար, այդուհանդերձ բոլորովին այլ էր աշխարհի առաջադեմ մտածողների արձագանքը: Հատուկ հիշատակության են արժանի Մ. Թվենի, Յ. Լեփսիուսի, Ա. Թ. Վեգների, Հ. Մորգենթաուի, Ա. Մանդելշտամի և շատ ուրիշների անունները:

Հատկանշական է, որ վերջին տարիներին արևմտյան գիտական շրջանակների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման շրթայա-

*Չողվածն ընդունվել է տպագրության 30.05.2012:

1 «Թուրքական ժխտողականության սինդրոմ» և «Ժխտողականության արդյունաբերություն» արտահայտություններին մասնավորապես հանդիպում ենք Վ. Դադյանի «Հայոց ցեղասպանության թրքական հերքման գլխավոր տարրերը. խեղաթյուրման և կեղծիքի մասնավոր դեպքերի ուսումնասիրություն» (The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case of Distortion and Falsification, Canada, The Zoryan Institute, 1999) աշխատության մեջ:

2 Հայոց ցեղասպանությունը հիշատակող ու դատապարտող օրինագծեր են ընդունվել 20-ից ավելի երկրներում:

3 Տե՛ս **Henry Morgenthau**, Ambassador Morgenthau's Story, Garden City New York, Doubleday, Page & Company, 1918, p.324.

կան արձագանքի ուրույն մաս է կազմում թուրք պատմաբան ու հանրաբան Թաներ Աքչամի **“A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility”** աշխատությունը⁴, որտեղ հայերի Օսմանյան շրջանի պատմությունը և հայ-թուրքական հարաբերություններն ընդհանրապես դիտարկվում են նոր լույսի ներքո՝ «կոտորելով» բազմաթիվ մտածական կաղապարներ ու կարծրատիպեր: Խոր հետազոտությունների վրա հիմնված այս գրքի միջոցով Թ.Աքչամը թուրքերի ներկա սերնդին ներկայացնում է նրա անցյալի ամենասանոթաբեր փաստերը: Ինչպես իրավամբ նշում է հեղինակը, Թուրքիան պետք է դեմ հանդիման կանգնի իր իսկ պատմության առաջ և բարոյական պատասխանատվություն կրի իր նախորդների հայատյաց քաղաքականության համար. հենց դա է այն վճռական քայլը, որ Թուրքիան պետք է անի՝ ճանապարհ հարթելով դեպի իսկական ժողովրդավարություն⁵:

Թ. Աքչամը այն եզակի թուրք պատմաբաններից է, որը բացահայտ քննադատում է 1915 թ. ոճրագործությունը՝ որակելով այն որպես ցեղասպանություն: Այդ են վկայում տարբեր պարբերականներում հանդիպող հետևյալ տողերը.

“One of a handful scholars who are challenging their homeland’s insistent declarations that the organized slaughter of Armenians did not occur, Akcam is the **first Turkish specialist to use the word ‘genocide’ publicly in this context**”⁶.

(*The New York Times, Turks Breach Wall of Silence on Armenian, March 06, 2004*)

“The few Turkish Scholars who have challenged the official line have been called traitors. **Taner Akcam is the only Turkish historian to have talked of genocide**”⁷.

(*The Economist, Turkey and the Armenians. A Historical Heroine, March 25, 2004*)

“What makes Akcam’s work stand out - apart from the fact that the author is a Turk - is that his is the **first scholarly attempt to understand the genocide from the perspective of the perpetrator rather than the victim**”⁸.

4 Թաներ Աքչամը քաղաքականությամբ զբաղվել է վաղ տարիքից: 1976 թ. ծերբակալվել է որպես ուսանողական քաղաքական պարբերականի խմբագիր և դատապարտվել 10 տարվա բանտարկության: Մեկ տարի անց փախել է բանտից և ապաստան գտել Գերմանիայում՝ «Միջազգային ներում» կազմակերպության հովանու ներքո: 1988-ից սկսել է աշխատել Համբուրգի Սոցիալական ուսումնասիրությունների ինստիտուտում և հետաքրքրվել Հայոց ցեղասպանությանն առնչվող հարցերով: 1996 թ. Հանովերի համալսարանում այդ թեմայով պաշտպանել է դոկտորական թեզ, իսկ 2002-ից պրոֆեսորի հրավիրյալ ասիստենտ է Մինեսոտայի համալսարանում (ԱՄՆ): Հեղինակ է 10 գրքերի, այդ թվում՝ 2006թ. լույս տեսած՝ “A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility” («Ամոթալի արարք. Հայոց ցեղասպանությունը և թուրքական պատասխանատվության խնդիրը»), աշխատությունը, որը մեր ուսումնասիրության առարկան է:

5 Տե՛ս <http://archive.168.am/am/articles/10909-pr>

6 «Նյու Յորք Թայմս»-ի մեկնաբան Բելինդա Կուպերը գրել է. «Աքչամը այն սակավաթիվ գիտնականներից է, որոնք մարտահրավեր են նետում իրենց հայրենի Թուրքիայի այն համառ պնդումներին, թե հայերի կազմակերպված սպանող տեղի չի ունեցել: Աքչամը առաջին թուրք մասնագետն է, որը հրապարակայնորեն օգտագործում է **ցեղասպանություն** բառն այս համատեքստում»:

7 «Փոքրաթիվ այն թուրք գիտնականները, որոնք մարտահրավեր են նետել պաշտոնական դիրքորոշմանը, որակվել են որպես դավաճաններ: Թաներ Աքչամը միակ թուրք պատմաբանն է, որը բարձրաձայնել է ցեղասպանության հարցը»:

8 «Բացի այն փաստից, որ հեղինակն ազգությամբ թուրք է, Աքչամի աշխատանքը աչքի է ընկնում նաև նրանով, որ այն առաջին գիտական փորձն է ցեղասպանությունը ավելի շուտ ոճրագործի տեսանկյունից ընկալելու, քան զոհի»:

(*Montreal Gazette, Taner Akcam: The Turk who Insists Turkey Acknowledge The Armenian Massacre, June 26, 2004*).

Հայոց ցեղասպանության հարցում Թ.Աքչամի դիրքորոշումը ակնհայտ է դառնում առաջին իսկ պահից, երբ ընթերցողը ձեռքն է վերցնում նրա գիրքը: Վերնագրում արդեն խտացած է հեղինակի գնահատողական վերաբերմունքը ներկայացվող փաստերի, իրադարձությունների ու գաղափարների նկատմամբ: Նրա դատապարտողական մոտեցումը նախ և առաջ դրսևորվում է վերնագրի “**a shameful act**” որոշչային բառակապակցությամբ, որտեղ հիմնական իմաստակիր միավորը այս առումով **shameful** ածականով արտահայտված որոշիչն է, ընդ որում՝ ամոթալիության գաղափարը իրացվում է ներհատուկ բացասական առնչականակային երանգավորում ունեցող **shame** հիմքի և այդ երանգներն առավել խտացնող **-ful** ածանցի զուգակցմամբ: **Shameful** միավորի բացասական լիցքն ավելի է հագեցնում, երբ այն ընկալվում է **the Armenian Genocide and the question of Turkish responsibility** համատեքստում, որտեղ **Genocide** միավորի գործածությունն առանց չակերտների ուղղակիորեն մատնանշում է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում հեղինակն ընդունում է Հայոց ցեղասպանության իրողությունը և դատապարտում այն իրականացնողներին: Ավելին, Թ. Աքչամի ազգային պատկանելությունը որևէ կերպ չի խոչընդոտում նրան արտահայտելու իր ազնիվ գաղափարները ի պաշտպանություն Հայկական հարցի և կոչ անելու իր ազգակիցներին՝ չփախչել պատասխանատվությունից, քանզի այդ ճանապարհով է, որ, թերևս, կհաջողվի իր ազգի ճակատից մաքրել նախնիների թողած խարանը:

Այլ կերպ ասած՝ գրքի վերնագիրն առաջին իսկ պահից գրավում է ընթերցողի ուշադրությունը, հակիրճ տեղեկություն հաղորդում տեքստի ընդհանուր բովանդակության մասին, ընդհանուր գծերով պարզաբանում տեքստի ինքնությունը և հնարավորություն տալիս ընթերցողին կանխատեսելու նրա ընդհանուր ուղղվածությունը:

Հետաքրքիր է, որ հեղինակն իր գիրքը ձոնում է ազգությամբ թուրք Հաջի Հալիլի հիշատակին, ով 1995 թ. Հայաստանում կազմակերպված գիտական համաժողովում ելույթ ունեցած Գրեգ Սարգսյանի վկայությամբ՝ վտանգելով սեփական կյանքը, տեղահանության օրերին փրկել և ավելի քան վեց ամիս թաքցրել է վերջինիս մոր ընտանիքի ութ անդամներին: Հեղինակի պնդմամբ՝ թուրք Հաջի Հալիլի այսօրինակ հերոսական արարքը, ինչպես նաև հայի կողմից թուրքի վերոհիշյալ արարքի անկեղծ գովերգումը հիմք են տալիս նրան դրական տեղաշարժեր ակնկալելու հայ-թուրքական հարաբերություններում: Այսպես՝

I would like to dedicate this book to the memory of Haji Halil, a devout Muslim Turk, who saved the members of an Armenian family from deportation and death by keeping them safely hidden for over half a year, risking his own life. **His courageous act continues to point the way toward a different relationship between Turks and Armenians.** I was deeply moved by the story, by the humanity that triumphed over evil and by the fact that an Armenian could find it in his heart to praise a Turk in a public forum, for the humanity. The memory of Haji Halil reminds us that **both, Turks and Armenians, have a different history on which they can build a future** (p.VIII).⁹

9 «Կուզեմայի գիրքը ձոնել բարեպաշտ թուրք մահմեդական Հաջի Հալիլի հիշատակին, ով, վտանգելով

Համատեքստից ակնհայտ է, որ գրելով Հայոց ցեղասպանության մասին և գիրքը նվիրելով թուրքի հիշատակին, հեղինակը նպատակ ունի բացել թուրք հասարակության աչքերը, օգնել հասկանալու և ճանաչելու իր անցյալը՝ այդ կերպ փորձելով նոր լույս սփռել հայ-թուրքական հարաբերությունների վրա: Ու թեև Թ. Աբջանը լիովին գիտակցում է, որ Հաջի Հալիլի և նրա նման առանձին անհատների հերոսական պահվածքը չի կարող հակակշռել կատարվածի ծավալներն ու դաժանության աստիճանը, մա չի կարող չգնահատել ու չհիանալ թուրքի այդ տեսակով: Նա կնախընտրեր, որ Հաջի Հալիլի նմանները շատ լինեին իր ազգի մեջ: Չէ՞ որ ինքն էլ թուրք է և չի ուզում ամաչել իր ազգակիցների ամոթալի պահվածքի համար:

“This book breaks with that tradition. It is a call to the people of Turkey to consider the suffering inflicted in their name on those “others”. The reason for this call is not only the scale of the Armenian genocide, which was in no way comparable to the individual acts of revenge carried out against Muslims. It is also because all studies of large-scale atrocities teach us one core principle: To prevent the recurrence of such events, **people must first consider their own responsibility, discuss it, debate it, and recognize it.** In the absence of such honest consideration, there remains the high probability of such acts being repeated, **since every group is inherently capable of violence; when the right conditions arise this potential may easily become reality, and on the slightest of pretexts.** There are no exceptions. Each and every society needs to take a self-critical approach, one that should be firmly institutionalized as a community’s moral tradition regardless of what others might have done to them. It is this that prevents renewed eruptions of violence (p.2)¹⁰

Գիրքը կոչ է թուրք ժողովրդին՝ չխուսափել և անդրադառնալ իր պատմության՝ վայրագություններով լեցուն ամոթալի էջերին (dark chapters), փորձել քննարկել, ճանաչել և քննադատել թուրքերի դատապարտելի արարքները՝ հետագայում մարդկության դեմ ուղղված նմանօրինակ ոճրագործությունները կանխելու նպատակով: Հատվածում այս գաղափարը ընթերցողին է փոխանցվում այնպիսի առնչանակալիք երանգներով հագեցած լեզվական միջոցների գործածությամբ,

իր կյանքը, տեղահանության օրերին մահվան ճիրաններից փրկել և ավելի քան վեց ամիս թաքցրել է մի հայ ընտանիքի: Նրա համարձակ քայլը մատնանշում է թուրքերի և հայերի միջև այլ որակի հարաբերությունների հասնելու ուղին: Ինձ խորապես ցնցել էր չարությանը մարդասիրությամբ հաղթելու այդ յուրօրինակ արարքը և հատկապես այն փաստը, որ հայը, ասելով իր սրտի խոսքը, ամբիոնից հրապարակայնորեն գովաբանել էր մի թուրքի: Հաջի Հալիլի հիշատակը հիշեցնում է մեզ, որ և՛ թուրքերը, և՛ հայերը այլ պատմություն ունեն, որի վրա կարող են ապագա կառուցել» (էջ VIII):

10 «Այս գիրքը խախտում է այդ ավանդույթը: Այն կոչ է Թուրքիայի ժողովրդին գիտակցել իր իսկ կողմից այսպես կոչված ուրիշներին հասցված տառապանքը: Պատճառը ոչ միայն Հայոց ցեղասպանության լայն մասշտաբն է, որը ոչ մի կերպ հնարավոր չէ համեմատել մահմեդականների դեմ իրականացված վրեժխնդրության առանձին դեպքերի հետ, այլև այն, որ լայնածավալ վայրագությունների բոլոր վերլուծությունները հաստատում են մի հիմնարար դրույթ, նմանօրինակ դեպքերի կրկնությունը կանխելու համար հարկ է նախ զգալ և գիտակցել մեղքի բաժինը, քննարկել, վիճարկել և ապա ճանաչել այն: Այսօրինակ անկեղծ քննարկման բացակայությունը մեծացնում է նման դեպքերի կրկնության հավանականությունը, քանզի ամեն մի խմբի էլ ներհատուկ է բռնություն գործելու կարողությունը, որը համապատասխան պայմաններում, նույնիսկ աննշան պատրվակի առկայությամբ, կարող է հեշտությամբ իրականություն դառնալ: Բացառություններ չկան: Յուրաքանչյուր հասարակություն կարիք ունի ինքնաքննադատության, այնպիսին, որը, անկախ ուրիշների վարած քաղաքականությունից, պետք է հաստատուն կերպով ամրագրվի որպես տվյալ հանրության բարոյական նորմ: Հենց սա է, որ կարող է կանխել բռնության վերսկսման նոր ժայթքումները» (էջ 2):

ինչպիսիք են **inflict, prevents, renewed, eruptions, violence**.

Լեզվագործաբանական քննության դիտանկյունից¹¹ հատկապես հետաքրքիր է բազմակի ստորոգյալի կիրառությունը (**consider their own responsibility, discuss it, debate it, and recognize it**), որով հեղինակը փորձում է ոչ միայն համոզիչ դարձնել իր խոսքը, այլև նշել այն հաջորդական քայլերի շղթան, որոնք կհանգեցնեն ցեղասպանության ընդունմանը. նախ գիտակցել մեղքի բաժինը (**consider**), քննարկել (**discuss**), վիճարկել (**debate**) և ապա՝ ճանաչել (**recognize**): Գործաբանական արժևորման առումով կարևոր է նաև **“others”** միավորի գործածությունը: Մեր ուսումնասիրություններում արդեն անդրադարձել ենք their, they, these դերանվանական միավորների կիրառությանը՝ Հայոց ցեղասպանությունը չընդունող աշխատանքներում, մասնավորապես Հ.Բ.Դանըշմանի “An Armenian Question...? Let’s Consider...” գրքի հիման վրա¹², որտեղ դրանք վերցված չեն չակերտների մեջ և արտահայտում են հայերի ու թուրքերի՝ իրար նկատմամբ խորթ, օտար լինելու ներակա իմաստը: Վերը նշված հասկացում “others” դերանվան կիրառությունը չակերտների մեջ շեշտադրում է հեղինակի բուն ցանկությունը՝ վերացնել մնան օտարացման, միմյանց նկատմամբ ունեցած խորթության գիտակցության կարծրատիպը՝ միաժամանակ քննադատության սլաքն ուղղելով այն հետազոտողների դեմ, որոնք չակերտների գործածությամբ ընդունում, հաստատում և մշտապես բորբոքում են օտարության զգացողությունը:

Այլ կերպ ասած՝ չակերտների կիրառմամբ հեղինակը տվյալ դեպքում նոր իմաստ է հաղորդում բառին՝ իրականացնելով իր հաղորդակցական նպատակը. ընդգծել ազգերի, այդ թվում՝ հայ և թուրք ազգերի խաղաղ գոյակցության հնարավորության գաղափարը: Հեղինակը, իր գիրքը նվիրելով Հաջի Հայիլի հիշատակին, գրում է Հայոց ցեղասպանության մասին՝ ընդունելով և ճանաչելով այն, սակայն միևնույն ժամանակ, ազգությամբ թուրք լինելով, ջանում է արդարացման ուղիներ գտնել թուրք ժողովրդի համար՝ հավասարության նշան չդնելով թուրք ազգի բոլոր շերտերի միջև: Այդ է վկայում ոչ միայն **every group, inherently capable of violence, the right conditions arise this potential may easily become reality, on the slightest of pretexts** բառերի, բառակապակցությունների և ասույթների առկայությունը վերը բերված համատեքստում, այլև գրքի ուրիշ հատվածներ, ինչպես օրինակ՝

“Those who acted collectively in history were not the entirety of “Turks” and “Armenians”, but certain **organizations or groups** that shared a common interest and claimed to be acting in the name of the nation or religion to which they belonged. In

11 Այսօր լեզվաբանական հետազոտություններում առավել կարևորվում է մարդու՝ որպես հաղորդակցության կենտրոնական տարրի դերը: Պատահական չէ, որ վերջին տարիներին հատկապես մեծ է լեզվաբանների հետաքրքրությունը «խոսող-նշան» (speaker-sign) հարաբերակցության ոլորտում: Պակաս կարևոր չէ նաև լսողի (listener) գործունը հաղորդակցման գործընթացում: Այս բարդ փոխհարաբերության ուսումնասիրությամբ զբաղվում է ժամանակակից լեզվաբանության առավել հետաքրքիր և հեռանկարային բնագավառներից մեկը՝ գործաբանական լեզվաբանությունը, որը հաղորդակցական ուղղվածություն ունի: Տե՛ս **Н.Д.Арутюнова, Е.В.Падучева**, Истоки, проблемы и категории прагматики. // Новое в зарубежной лингвистике. Вып.16, М.: Прогресс, 1985, с. 3-43; **S.C.Levinson**, Pragmatics. Cambridge: Cambridge University Press, 1983; **J.Verschueren**, Understanding Pragmatics. London. New York: Oxford University Press, 1999, etc.

12 Տե՛ս **S.Gasparyan, G.Harutyunyan, L.Gasparyan**, Interpretations of the Armenian Genocide: A Linguo-cognitive Study. // Language, Literature & Art in Cross-Cultural Contexts. Third International AASE Conference, 4-8 October, Yerevan, 2011.

some cases, this meant the **government**; in others a political party; in still others, the representatives of a clearly defined **class or subclass**. It is even questionable whether the broad mass of Muslims in Anatolia at the time understood themselves as Turks, or Kurds, rather than as Muslims. In all cases, however, these actors never comprised the entire national or religious group that they claimed to represent (p.15)¹³

Թեև գրքի ողջ շարադրանքի տարբեր հատվածներում հիմնվելով բազմաթիվ վկայությունների, դատական գործընթացներում կազմված փաստաթղթերի, ներպետական ու միջպետական տարբեր հրահանգների և հրատարակված ու չհրատարակված գրառումների առկայության փաստի վրա՝ հեղինակը շեշտադրում է Հայոց ցեղասպանության նախապես ծրագրված լինելը, այդուհանդերձ բերված հատվածում **group, government, organization, political party, representatives of a clearly defined class or subclass** բառերի ու բառակապակցությունների կիրառմամբ նա մեկ անգամ ևս փորձում է համոզել լայն հանրությանը, որ կատարված ոճրագործությունը որոշակի խմբի գործն է, լինի դա կուսակցություն, իշխանություն կամ մեկ այլ օղակ: Նպատակը մեկն է՝ մեղմել թուրք ժողովրդի մեղքի բաժինը՝ ընդգծելով այն հանգամանքը, որ պատասխանատուն ազգը չէ, այլ մարդկանց որոշակի զանգված: Ասվածն առավել հասկանալի է դարձնում նաև այն հատվածը, որտեղ հեղինակը անդրադառնում է հայ և թուրք եզրույթների քննությանը: Այսպես՝

“...Instead I have selected more precise terms for the people involved in any particular actions. The terms “**Turks**” and “**Armenians**” which are widely used in historiography and conversation, are not historical categories but rather **ahistorical constructions**. They are used to express only that one group is not Armenian and the other not Turk. This not only misrepresents history but exacerbates public perceptions and prejudices today (p.16)¹⁴

Համատեքստից ակնհայտ է հեղինակի միտումը. նորովի անդրադառնալ հայ և թուրք եզրույթներին և հայ-թուրքական հարաբերությունների քննությունը տեղափոխել նոր հարթություն: Իհարկե, դժվար է համաձայնել հեղինակի այն մտքին, թե հայ և թուրք եզրույթները պատմական կատեգորիաներ չեն մատնանշում: Թեև, որպես պատմագիտության, ազգագրության, մարդաբանության ոլորտներում լայնորեն կիրառվող բառեր, դրանք ընդամենը ազգային պատկանե-

13 «Նրանք, ովքեր միասնաբար էին հանդես գալիս պատմության մեջ, չէին կարող որակվել որպես «թուրքեր» և «հայեր»: Դրանք առանձին կազմակերպություններ կամ խմբավորումներ էին, որոնք, համախմբված ընդհանուր շահի շուրջ, հայտարարում էին, որ գործում են ազգի կամ նրա կրոնական դավանանքի անունից: Որոշ դեպքերում դա կառավարությունն էր կամ քաղաքական այս կամ այն կուսակցությունը, որոշ դեպքերում էլ՝ առանձին սոցիալական խավի կամ ենթախավի ներկայացուցիչները: Նույնիսկ խիստ հարցականի տակ է, թե այդ ժամանակ Անատոլիայում բնակվող մահմեդականների լայն զանգվածներն արդյոք իրենց թուրքեր կամ քրդեր էին համարում, թե ավելի շուտ մահմեդականներ: Այդուհանդերձ, ամեն դեպքում, այդ դերակատարները, չնայած իրենց համառ պնդումներին, ամբողջ ազգը կամ ամբողջական կրոնական խմբակցությունը չէին ներկայացնում» (էջ15):

14 «...Փոխարենը ընտրել են առանձին գործողությունների մեջ ներգրավված մարդկանց բնութագրող առավել ճշգրիտ եզրույթներ: **Թուրքեր և հայեր** եզրույթները, որոնք լայնորեն օգտագործվում են պատմագրության, նաև խոսակցության մեջ, ոչ թե պատմական, այլ ավելի շուտ ապապատմականացված կատեգորիաներ են: Դրանք պարզապես օգտագործվում են միայն նշելու, որ մի խումբը հայ չէ, իսկ մյուսը՝ թուրք: Սա ոչ միայն խեղաթյուրում է պատմությունը, այլև այսօր առավել սրուն հանրային ըմբռնումները և կանխակալ կարծիքները» (էջ 16):

լությունը նշող մետալեզվական միավորներ են (ethnonemes), այդուհանդերձ բովանդակության առումով հնարավոր չէ հերքել դրանց պատմականությունը, քանի որ ազգն ինքնին մարդկանց հանրույթի՝ իրական տարածության ու ժամանակի մեջ կազմավորված ձև է, որին բնորոշ են նյութական, լեզվական ու մշակութային ընդհանրություններ¹⁵: Դիտարկելով վերոհիշյալ միավորները որպես ապապատմականացված հասկացություններ, հեղինակն, անշուշտ, նպատակ ունի վերացնել խորթության կարծրատիպը, որը պատմականորեն է ձևավորվել: Սակայն հնարավոր չէ հերքել այն իրողությունը, որ ցեղասպանությունից գրեթե մեկ հարյուրամյակ անց էլ թե՛ հայի և թե՛ թուրքի գիտակցության մեջ հայ և թուրք հասկացությունները դաջված են որպես իրարամերժ, ըստ երևույթին՝ նաև այն պատճառով, որ մեղավոր կողմը պատմական ճշմարտությունն ընդունելու համարձակություն չի գտնում իր մեջ, ավելին՝ գործադրում է բոլոր հնարավոր ջանքերը՝ անհերքելի ճշմարտությունը հերքելու և իր գալիք սերունդներին անցյալը աղավաղված ներկայացնելու համար: Ասվածն ավելի համոզիչ դարձնելու համար փորձենք լուսաբանել Թաներ Աքչամի այն տողերը, որտեղ նա անդրադառնում է ցեղասպանություն եզրույթի քննությանը:


“Because of the long-standing Turkish policy of denial, the very term **“genocide”** has become contested - sacred to Armenians, taboo to Turks. Both sides attach supreme importance to the question whether or not “genocide” should be used”¹⁶ (p.9).

Հատվածից երևում է, որ, պայմանավորված պատմական իրողությամբ, ընդհանուր հենքային գաղափարախոսությամբ և հաղորդակցական մտադրությամբ, **genocide** միավորը հայի և թուրքի գիտակցության մեջ ընկալվում է որպես երկու իրարամերժ հասկացություններ՝ **սուրբ (sacred)** հայի համար և **արգելված (taboo)**՝ թուրքի:

Այսպիսով, թուրք խոսողի/լսողի գիտակցության մեջ **genocide** բառը զուգորդվում է «արգելված, մտացածին, լռության մատնված, ոչ հիշարժան, պատմության ամոթալի էջեր հիշեցնող, վարկաբեկող» գաղափարների հետ, իսկ հայի մտածողության մեջ այն ենթադրում է հետևյալ ընդհանուր զուգորդումների ամբողջությունը՝ «ոճրագործություն, կոտորած, պատմության դառը էջեր, չսպիացած վերք, կորուսյալ երկիր, արյունահեղություն և այլն»: Յուրաքանչյուր դեպքում, ելնելով ազգային մտածելակերպից, **genocide** միավորի ծածկագրված իմաստը լսողի ուշադրությունը հրավիրում է այդ միավորի այն առնչանակային երանգավորումների վրա, որոնք հարիր են հենց տվյալ ժողովրդի մտածական դաշտին: Ասվածը կարելի է ամփոփել հետևյալ գծապատկերի տեքստով՝

15 Տե՛ս Փիլիսոփայական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1975, էջ 4: Այս հարցում կարելի է համոզվել՝ կարդալով նաև Միրոսլավ Զոռչի “Nationalism and national movements: comparing the past and the present of Central and Eastern Europe” հրապարակումը (“Nations and Nationalism” 2(1), 1996, p. 35-44).

16 «Վաղուց արդեն որդեգրված թուրքական ժխտողական քաղաքականության պատճառով **ցեղասպանություն** եզրույթը վիճահարույց է դարձել. սուրբ՝ հայի համար, արգելված՝ թուրքի: Երկու կողմն էլ առավելագույնս կարևորում են այն, թե արդյոք պետք է օգտագործվի **ցեղասպանություն** միավորը» (էջ 9):



Հստակ երևում է, որ թուրք խոստդի և հայ խոստդի մտածական դաշտում **genocide** բառին բնորոշ հնարավոր առնչանակային երանգավորումները ընդհանրական բնույթ չեն կրում: Մրանով էլ պայմանավորված է երկու ազգերի միջև ցեղասպանության հարցում փոխըմբռնման ապահովման անհնարինությունը մինչ օրս: Ընդ որում՝ հակադիր կողմերի միջև առկա լարվածությունն ավելի է ուժգնանում՝ կախված այն բանից, թե որքանով է դժվարանում նրանց միջև ընդհանուր եզրեր գտնելը: Կարևոր է նաև այն, որ հասկացական առումով խոստդի ընկալումը, պայմանավորված ազգային պատկանելությամբ, գաղափարախոսությամբ, մտածելակերպով և մի շարք այլ գործոններով, մի դեպքում մոտենում է **genocide** հասկացության բուն էությանը և ձևավորում պահանջատիրական գաղափարներ, մյուս դեպքում հեռանում դրանից՝ առաջացնելով ժխտողական տրամադրություններ:

Հետաքրքիր է նաև **genocide** եզրույթի՝ Թ. Աբշանի մեկնաբանությունը, որի հիմքում լեհ-հրեա իրավագետ Ռ. Լեմկինի սահմանումն է¹⁷.

“I have used the term in line with the United Nations definition adopted in 1948. Accordingly, **genocide includes the partial or complete destruction of an ethnic, national, racial, or religious group, whether in periods of peace or war.** The definition covers various means of destruction, be it *killing members of a particular group, exposing them to grave physical or emotional harm, inflicting such physical damage that ends in group’s continued existence, preventing the group’s members from giving birth, or forcibly removing their children and merging them with other communities.* Under the terms of the UN definition, and in light of all the documentary evidence, **we cannot but call the acts against the Armenians genocide**”¹⁸(p.9).

17 1944 թ. Ռ. Լեմկինի Միացյալ Նահանգներում լույս տեսած “Axis Rule in Occupied Europe” աշխատության մեջ (տե՛ս <http://en.wikipedia.org/wiki/Genocide>) հեղինակը հանգամանալից իրավագիտական վերլուծության է ենթարկում նացիստական Գերմանիայի վարած քաղաքականությունը երկրորդ աշխարհամարտի տարիներին և առավել հանգամանորեն քննում ու լրացնում genocide եզրույթին տված իր մեկնաբանությունները:

18 «Կիրառել են այդ եզրույթը՝ հիմք ընդունելով Միացյալ ազգերի կազմակերպության կողմից 1948 թ. ընդունած սահմանումը: Համաձայն դրա՝ ցեղասպանությունը սահմանվում է որպես ցանկացած գործողություն, որը կատարվում է էթնիկական, ազգային, ցեղային կամ կրոնական որևէ խումբ, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացնելու միտումով՝ թե՛ խաղաղ և թե՛ պատերազմական պայմաններում: Սահմանումը ընդգրկում է ոչնչացման տարբեր ձևեր՝ խմբի անդամների սպանություն, լուրջ ֆիզիկական կամ հոգեկան վնասների պատճառում, միտումնավոր կերպով կենսական այնպիսի պայմանների ստեղծում, որոնք ուղղված են խմբի անդամների լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, այնպիսի գործողությունների իրականացում, որոնք ուղղված են խմբի ներսում ծնելիությունը կանխելուն, երեխաներին բռնությամբ մեկ այլ խումբ տեղափոխելուն: Համաձայն Միացյալ ազգերի կազմակերպության սահմանման և լուսաբանող բոլոր փաստաթղթային վկայությունների, հայերի դեմ իրականացված ոչ այլ ինչ է, քան ցեղասպանություն» (էջ 9):

Իսկապես գնահատելի են Թ. Աքչամի տողերը (**we cannot but call the acts against the Armenians genocide**), որտեղ հեղինակը վստահություն և համարձակություն ներշնչող ասույթի կիրառմամբ մեկ անգամ ևս բերում է այն հստակ համոզման, որ դարասկզբին Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրականացվածը ոչ այլ ինչ է, քան ցեղասպանություն, և այդ եղեռնագործական իրադարձությունները համապատասխանաբար արժևորող միջազգայնորեն հաստատված միակ համարժեք միավորը **genocide** բառն է¹⁹:

Սակայն ուշագրավ է մի հանգամանք. հեղինակի գնահատմամբ հարկ է կարևորել ոչ թե եզրույթը, այլ բուն իրողությունը և դրան համարժեք բարոյական գնահատականը: Այսպես՝

The important thing, however, is not the term, but rather the moral position that recognizes the crime and condemns it. However we define it, whatever word we use, we must acknowledge that this history involved the deliberate destruction of a people. In 1915 Cerkez Hasan was an Ottoman officer commissioned to resettle Armenians in what are now the Syrian and Iraqi deserts. When he realized that the real aim of the deportations was not resettlement but annihilation he resigned. “You may argue whether or not the word ‘killing’ is synonymous with ‘deportation’”, he said. “Use it in any way you want; it doesn’t change what actually happened in any real sense....There is only one terrible way to understand what happened, and of which the whole world is aware (Aksin 1987: 169²⁰)”²¹ (p.9).

Այդուհանդերձ, տեսադաշտից չի կարելի դուրս թողնել լեզվական այն կարևոր իրողությունը, որ «բառը, օժտված լինելով տարողունակ դառնալու զորությամբ, տարբեր լեզվական ու արտալեզվական գործոնների ազդեցությամբ կարող է հարստանալ, հազննալ նորանոր իմաստներով ու իմաստային երանգներով, գնահատողական-վերաբերմունքային բաղադրիչներով, ձեռք բերել խորություն ու ծավալ»²² և, իր մեջ խտացնելով խոսողի վերաբերմունքը տվյալ փաստի նկատմամբ, վերածվել գեների՝ լսողի վրա ներազդելու համար: Չի կարելի անուշադրության մատնել նաև այն հանգամանքը, որ ամեն տարի ապրիլի 24-ին համայն հայությունը համակ ուշադրությամբ լսում է ԱՄՆ նախագահի խոսքը. կինչեցնի՞ արդյոք **genocide** բառն իր ելույթում, քանզի հենց լեզվական այդ մեկ միավորի արտասանությունը ի գորու է նոր ենթատեքստ հաղորդելու խոսքին, անգամ նոր տեղաշարժ արձանագրելու 1915 թ. ցեղասպանությունը ճանաչելու, դատապար-

19 Այս մասին մանրամասն տես **Ս.Գասպարյան**, Եղեռն բառի համարժեքության դաշտը անգլերենում, «Վեմ» համահայկական հանդես, Եր., 2010, թիվ 1(29), էջ125-136:
 20 **S.Aksin**, Jön Türkler ve İttihat ve Terraki. Istanbul, 1987, p. 169.
 21 «Եականը, այնուամենայնիվ, ոչ թե եզրույթն է, այլ, ավելի շուտ, ոճիրը գիտակցելու և դատապարտելու բարոյական դիրքորոշումը: Ինչպես էլ սահմանելու լինենք, ինչ միավոր էլ օգտագործելու լինենք, մի բան ակնհայտ է. մենք պետք է գիտակցենք, որ այս պատմության մաս է կազմում մի ողջ ազգի ոչնչացման ծրագրի իրականացումը: 1915 թ. Չերքեզ Հասանը Օսմանյան բանակի սպա էր, որը լիազորված էր վերաբնակեցնելու հայերին այնտեղ, ուր այժմ Իրաքի և Սիրիայի անապատներն են: Երբ նա գիտակցեց, որ տեղահանման իրական նպատակը ոչ թե վերաբնակեցումն է, այլ ոչնչացումը, հրաժարական տվեց. «Կարելի է վիճարկել, թե արդյոք սպանություն և տեղահանություն բառերը հոմանիշներ են», ասում էր նա: «Ամեն դեպքում, դրանից չի փոխվում այն, ինչ իրականում տեղի է ունեցել...Այն կարող է ընկալվել միայն մի ձևով, որին ողջ աշխարհը քաջատեղյակ է» (S.Aksin, 1987, p. 169):
 22 **Ս.Գասպարյան**, Եղեռն բառի համարժեքության դաշտը անգլերենում, «Վեմ» համահայկական հանդես, Եր., 2010, թիվ 1(29), էջ125-136:

տելու և պատասխանատվություն ստանձնելու գործընթացին հասնելու ճանապարհին:

Ի վերջո հեռու չէ այն օրը, երբ Հայոց ցեղասպանությունը կդատապարտվի համայն աշխարհի կողմից որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն՝ արդարությունը վերականգնելու և հետագա ցեղասպանությունները կանխելու վստահությամբ: Ուստի Թ. Աքչամի²³ աշխատությունը թույլ է տալիս այդ ճանապարհին արձանագրել մեկ քայլ առաջ, քանզի մեկ անգամ ևս վերահաստատում և հուսադրում է, որ Թուրքիան իր պատմության այս մութ էջերը ի վերջո «կկարդա», կընդունի ճշմարտությունը և ձեռնամուխ կլինի հայ-թուրքական հարաբերությունների խաղաղ կարգավորմանը²⁴:

Summary

TANER AKCAM'S "A SHAMEFUL ACT..."

A Pragmalinguistic Study

Seda K. Gasparyan
Gohar R. Harutyunyan

The paper aims at studying Taner Akcam's considerations of the Armenian Genocide and brings out his point of view concerning the responsibility of the Turkish Government and the Turks in general for the shameful, unforgettable and unpardonable crime their predecessors committed against the peaceful Armenian population in Western Armenia. His firm belief is that it is only by carrying the burden of responsibility that Turkey will be able to get over the syndrome of denial, "look into the eyes of the obvious truth" and cease to violate the undeniable historical reality in the perception and understanding of the coming younger generations of Turkey.

The application of the pragmalinguistic approach to the study of the book helps to reveal the meanings and shades of meanings implied in the text.

23 «Հայոց ցեղասպանությունը ոչ այլ ինչ է, քան իսկական ցեղասպանություն և ոչ թե ջարդ կամ սպանություն: Ես կասեի, եթե 1915 թ. տեղի ունեցածը ցեղասպանություն չանվանենք, այդ դեպքում պիտի ասենք, որ աշխարհում որևէ ցեղասպանություն չի եղել»: <http://araxmag.blogspot.com/2010/06/1915.html>
Սա է հեղինակի տրամաբանությունը՝ իրերը պետք է կոչվեն իրենց անուններով, որպեսզի ճիշտ վերաբերմունք ձևավորվի դրանց նկատմամբ:

24 Թուրքիայում վերջերս ուսումնասիրություններ իրականացրած Անուշ Ռ. Դովհաննիսյանի հողվածը, որը հրապարակվում է «Վեն»-ի ներկա համարում, հստակորեն ապացուցում է, որ մեզան լավատեսական հույսերն առայժմ առարկայական հիմքեր չունեն: Խմբ.: